

---

ՌԱՄԱԶ ԿՈՆՍՏԱՆՏԻՆԻ ԳՈՐԳԱԶԵ. Վրացերեն-հայերեն բառարան. *Երևան, ԵՊՀ հրատ., 2005, 716 էջ:*  
ԹԻՄՈՒՅ ԿՈՆՏԱՆՏԻՆԻՆ-ԺԵ ԳՈՐԳԱԺԵ, ԽԱՐԵՎԵՆ-ՆՈՄԵՆՅՈՒ ԼԵՅԻՍԿՈՆԻ, ԵՐԵՎԱՆԻ, ԵՐԵՎՆԻՍ ԿՈՆՎԵՐՍՈՒՅՈՒՄԻ ՆԻՍՏՐԱԿՏԻՆԻ ԳԱՄՈՄԱՅԻՆՈՒԹՅԱՆ, 2005, 716 ՅՅՅՐԸԻՈՒ.

*Հայ և վրաց ժողովուրդների տնտեսական, հասարակական-քաղաքական և գրական-մշակութային բազմադարյան սերտ կապերի առկայության պայմաններում զարմանալի է, որ հայերեն-վրացերեն և վրացերեն-հայերեն բառարաններ անցյալում չեն ստացվել: Միայն վերջին տասը տարիների ընթացքում այդ ասպարեզում որոշակի աշխուժություն նկատվեց, երբ լույս տեսան էրկու լեզուների առնչվող մի շարք բառարաններ ու զրուցարաններ, որոնց կարիքը վաղուց էր զգացվում թե՛ հայ և թե՛ վրաց իրականության մեջ:*

*Դեռևս անցյալ դարի վերջերին հրատարակվեց անվանի հայագետ-վրացագետ, Թբիլիսիի պետհամալսարանի երկարամյա դասախոս և հայագիտության ամբիոնի անփոփոխ վարիչ, ՀԽՄՀ ԳԱ թղթակից անդամ, պրոֆ. Լևոն Մելիքսեթ-Քեկի (1890-1963) հեղինակած «Հայերեն-վրացերեն բառարանը», որը բազմավաստակ գիտնականի տասնամյակների ջանադիր աշխատանքի արդյունքն էր և, ցավոք, նրա վաղափառ մահվան հետևանքով երկար ժամանակ մնացել էր անտիպ: Այն վերամշակել, համայնել և ստացրության էր պատրաստել Լ. Մելիքսեթ-Քեկի երբեմնի սան, խոստումնալից հայագետ, հիշյալ ամբիոնի աշխատակից Մերսի Ռոբարթիձեն, որը և լույս ընծայվեց Թբիլիսիում, 1996 թ.: Դա փաստորեն հայերեն-վրացերեն առաջին սպառնալիք բառարանն էր, որ ստեղծվել է ցայսօր<sup>1</sup>:*

*Եվ ահա, այդ արժեքավոր բառարանի հրատարակությունից շուրջ տասը տարի անց, Երևանի համալսարանի հրատարակչությունը «Գալուստ Գյուլբենկյան» հիմնարկության հովանավորությամբ անցյալ տարվա վերջերին լույս ընծայեց վրացի ճանաչված հայագետ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռամազ Գորգաձեի հեղինակած «Վրացերեն-հայերեն բառարանը», որը նույնպես թե՛ հայ և թե՛ վրաց իրականության մեջ իր նախորդը չունեցող սպառնալիք փորձն է:*

*Թարգմանական ընդհանուր բնույթի բառարանների լույսընծայումը երկուստեք խրախուսելի և ուշագրավ երևույթ պիտի համարել, քանի որ դրանք մեր օրերում կատարված առաջին անհրաժեշտ ու արդյունավետ քայլերն են: Իսկ ինչ վերաբերում է պատմությանը, ապա, ըստ երևույթին, անցյալում այդպիսի բառարանների կարիքն այնքան էլ չի զգացվել, քանի որ հայերն ու վրացիները, վաղնջական ժամանակներից ի վեր ապրելով կողք կողքի և մշտապես շփվելով իրար հետ, հեշտությամբ սովորել են միմյանց լեզուն և երբեք դրանց անհրաժեշտությունը չեն ունեցել: Դրա հետ մեկտեղ հայ մտավորականության մեծ մասը, հիմնականում ապրելով ու ստեղծագործելով Թբիլիսիում, ազատ կերպով տիրապետել է վրաց լեզվին: Նույնը պետք է ասել նաև արհեստավորների, առևտրականների ու մյուս խավերի, ինչպես և սահմանամերձ շրջանների բնակչության մասին, որոնք, թե՛ հայ և թե՛ վրացի, լեզվական որևէ խոչընդոտ չեն ունեցել միմյանց հետ հաղորդակցվելիս: Վրացի մտավորականության և հասարակ ժողովրդի մեծ մասը նույնպես տիրապետել է հայերենին:*

---

<sup>1</sup> Այդ բառարանի մասին տե՛ս Վ. Մ. Մ ա - ղ ա լ յ ա ն. Լևոն Մելիքսեթ-Քեկի. Հայերեն-վրացերեն բառարան, վերամշակեց, լրացրեց և հրատարակության պատրաստեց Մերսի Ռոբարթիձեն, Թբիլիսի, 1996, 336 էջ.- «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, №1, էջ 210-214:

Մակայն, անցյալ դարի առաջին քառորդից սկսած, երբ Թբիլիսին հայ մշակույթի ու գիտության կենտրոնը լինելու իր առաջնությունը զիջում է Երևանին, այստեղ նորնոր ձևավորվող մտավորականությունը, բնականաբար, չգիտեր և, համապատասխան լեզվական միջավայրի բացակայության պատճառով, չէր էլ կարող իմանալ վրացերեն: Ուստի, այդ ժամանակվանից էլ զգացվում է նման բառարանների անհրաժեշտությունը:

Անցած տասնամյակների ընթացքում մի քանի փորձեր են արվել հայերեն-վրացերեն և վրացերեն-հայերեն գրուցարաններ ու բառարաններ ստեղծելու ուղղությամբ: Հայտնի է, որ բուռնական դասագրքերին ու քրեստոմատիաներին կից բառարաններ են կազմել վրացի նշանավոր հայագետներ Բլիա Աբուլյադեն (1901-1968) և Բվանե Շիլակադեն (1910-1978): Նրանցից առաջինը իր «Հին հայերենի քրեստոմատիա» (Թբիլիսի, 1935) գրքում զետեղել է գրաբար-վրացերեն ընդարձակ բառարան: Բ. Աբուլյադեն հրատարակել է նաև «Վրացական պատմական ժամանակագրությունների հին հայերեն թարգմանությունները» (Թբիլիսի, 1953) աշխատությունը, ուր ներկայացրել է «Քարթլիս ցխովրեբա»-ի գրաբար տեքստը և դրան զուգադիր՝ բնագրի իր իսկ կատարած վրացերեն թարգմանությունը՝ կից ուսումնասիրությամբ և գրաբար-վրացերեն ու վրացերեն-գրաբար բառարաններով: Նա պատրաստել է նաև «Հին վրացերեն-գրաբար բառարանը», որը ցարդ անտիպ է: «Հայերենի և վրացերենի բառարանային հանդիպումները» ուսումնասիրությունը նույնպես նրա գրչին է պատկանում, որը տպագրվել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի «Աշխատությունների ժողովածուի» 3-րդ հատորում (Երևան, 1948):

Պրոֆ. Բ. Շիլակադեն ևս հայերեն-վրացերեն բառարան ստեղծելու փորձեր է կատարել: Նա իր «Ժամանակակից հայոց լեզվի քերականություն» (Թբիլիսի, 1971) և «Հին հայերենի քերականություն» (Թբիլիսի, 1975) գրքերում տվել է հայերեն բազմաթիվ բառերի վրացերեն թարգմանությունները:

Այս ամենից գատ, հիշյալ գիտնականները տասնամյակներ շարունակ՝ հեղինակելով Վրաստանի հայկական դպրոցների տարբեր դասարանների վրաց լեզվի դասագրքերը, դրանցում լայն տեղ են հատկացրել դժվար հասկանալի բառերի ու բառակապակցությունների բացատրություններին ու բառացանկերին, որոնք կարելի է համարել վրացերեն-հայերեն բառարանագրության սաղմեր: Այդ գործում նշված հեղինակների հետ մեկտեղ իրենց մեծ լուսման են ներդրել նաև ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Լևոն Մելիքսեթ-Քեկր և վրացի անվանի հայագետ, ՎԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ակակի Շանիադեն (1887-1987): Վերջինս իր «Հին վրացերենի քերականություն» աշխատության մեջ, որի հայերեն թարգմանությունը տպագրվել է ՀԽՍՀ ԳԱ հրատարակչության կողմից (1983 թ.), տվել է մի շարք քերականական եզրերի վրացերեն և հայերեն թարգմանություններն ու դրանց բացատրությունները:

Վրաստանի Հանրապետության հայկական դպրոցների վրացերեն դասագրքեր կազմելու նրանց աշխատանքը հետագայում՝ 1970-ականներից ի վեր, շարունակել են պրոֆ. Ա. Մարտիրոսովը, դոցենտներ Վլ. Պողոսյանը, գրախոսվող բառարանի հեղինակ Ռ. Գորգադեն և ուրիշներ, որոնք նույնպես, հետևելով իրենց ուսուցիչների օրինակին, այդ գրքերում զետեղել են ծավալուն բառացանկեր ու բառարաններ թե՛ վրացերեն-հայերեն և թե՛ հայերեն-վրացերեն:

Ստեղծվել են նաև այլ ինքնուսույցներ ու բառարանակներ, որոնցից առավել ամբողջականությամբ կարելի է առանձնացնել Ռ. Գորգադենի և Վլ. Պողոսյանի կազմած «Հայ-վրացերեն գրուցագիրքը», որը լույս է ընծայվել Թբիլիսիում, 1989-ին: Այս գրուցագիրքը, մեր կարծիքով, առաջինն է, որ ընդարձակորեն ներկայացնում է հայոց և վրաց լեզուների առօրյա խոսակցական բառերն ու բառակապակցությունները՝ զուգահեռ թարգմանություններով: Հայերեն-վրացերեն երկրորդ գրուցարանը հեղինակել է ԵՊՀ հայագիտական կենտրոնի հայ-վրացական բանասիրության խմբի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող Հր. Բայ-

րամյանը: Գիրքն ունեցել է երկու հրատարակություն (Երևան, 2005-2006): Նույն հեղինակի գրչին է պատկանում նաև իր այդ գրուցարանի հիման վրա ստեղծված «Русско-грузинский разговорник»-ը, որը լույս է ընծայվել 2005-ին: Այս ամենը, սակայն, սոսկ ուսուցողական նպատակ է հետապնդում և դպրոցական ու բուհական ծրագրերի սահմաններից այն կողմ չի անցնում:

Պատկերն ավելի ամբողջական դարձնելու նպատակով այստեղ ուզում ենք անդրադառնալ նաև հայ-վրացերեն բառարանագրության անցյալի փորձերին: Հայտնի է, որ անցյալում ևս այս երկու լեզուներով ընդհանուր բնույթի թարգմանական բառարաններ ստեղծվել են, որոնք, սակայն, մնացել են անտիպ: «Հետազոտողները հայ-վրացական վեց ձեռագիր բառարաններ են նշում, որոնցից ամենից ընդարձակը Մաշտոցի անվան Մատենադարանի հայ-վրացերեն բառարանն է, որը պատկանում է XVIII դարին: Այդ աշխատությունը հավանորեն կազմել է Ստեփան վարդապետը, որը բառարանի գլխաբառերը ամբողջությամբ վերցրել է Մխիթար Սեբաստացու «Քերականություն գրաբարի լեզուի հայկական սեռի» աշխատության մատենակից բառարանից, առանց քերականական որևէ նշում կատարելու: Ստեփան վարդապետի բառարանը պարունակում է ավելի քան 8.000 բառահոդված»<sup>2</sup>:

Պրոֆ. Լ. Մ. Մելիքսեթ-Բեկի հավաստմամբ կա նաև XVIII դ. մի անանուն հեղինակի հայերեն-վրացերեն բառարան, որն ստեղծվել է Մխիթար Սեբաստացու «Դուռն քերականության աշխարհաբար լեզուին հայոց» (Վենետիկ, 1727) աշխատության վերջում որպես հավելված զետեղված բառարանից<sup>3</sup>: Իսկ մյուս հայ-վրացերեն բառարանը Բոսնե Բատոնաշվիլու կազմածն է, որը պարզապես Կղեոպատրա Մարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտություն» (Մանկտ Պետերբուրգ, 1788) վերտառությամբ ռուս-հայերեն և հայ-ռուսերեն բառա-

րանի մի տարբերակն է՝ վրացերեն համարժեքների հավելումով ու որոշ լրացումներով, որը դարձյալ ցարդ մնում է ձեռագիր վիճակում:

Միջնադարից մեզ հասած հայերեն-վրացերեն մյուս ձեռագիր բառարանները ևս ունեն որոշակի արժեք: Եվ այստեղ, որպես հետաքրքիր երևույթ, պետք է նշել, որ դրանց մեջ կան այնպիսիք, որոնց գլխաբառերի երկրորդ եզրերը՝ թարգմանված վրացերեն բառերը, գրված են հայոց գրերով, ինչպես՝ օրինակ, Ջուր-ծղալի, փոխանակ՝ Վյօօ, Աղբուր-ծղարո, փոխանակ՝ Վյօօ, Լեզու-էնա (շն), Գին-փասի (ջն), Հին-ձվելի (ձջջլ) և այլն: Անցյալի հայ-վրացերեն բառարանագրության մյուս աչքի զարնող երևույթն էլ այն է, որ այդ բառարանների գրեթե բոլոր հեղինակները իրենց աշխատությունների համար հիմք են ընդունել Մխիթար Աբբայի վերոհիշյալ «Քերականություն» առընթեր բառարանը կամ «Բառգիրք հայոցը»:

Այլ է պատկերը վրացերեն-հայերեն բառարանագրության ասպարեզում: Այս ուղղությամբ հայ իրականության մեջ անցյալում լուրջ քայլեր չեն կատարվել, իսկ վրաց իրականության մեջ էլ առաջին փորձը պատկանում է միջնադարի մեծ գրող, գիտնական ու քաղաքական գործիչ, առակագիր ու բառարանագիր Սուլխան-Սաբա Օրբելիանու (1658-1725) գրչին: Սակայն, մինչ այդ բառարանի մասին խոսելը, նպատակահարմար ենք գտնում տեղեկացնել, որ վրաց լեզվի առաջին արժեքավոր բացատրական բառարանը՝ «Լեքսիկոնին» ևս ստեղծել է Ս.-Ս. Օրբելիանին: Սրա առաջին տպագրությունն իրականացվել է 1716 թ. և այդուհետև ունեցել է մի քանի հրատարակություն, ինչը վկայում է նրա արժանիքների մասին: Հեղինակը բառարանն ստեղծելու համար աշխատել է երկար տարիներ և, ի թիվս այլ աղբյուրների, օգտագործել է նաև «Բառգիրք հայոցը»: Այդ առթիվ նա իր «Լեքսիկոնիի» առաջաբանում գրում է. «Ես՝ Սուլխան-Սաբա Օրբելիանս, պատանեկության և ջահելությանս պահին շատ աշխատանք թափեցի այս գրքի վրա, քանի որ վրացերեն լեզվով բառարան այլևս չկար (և) քանի որ այն, որին Վախտանգ հինգերորդ թագավորը վրացե-

<sup>2</sup> Գ. Կ. Գ ա ո պ ա ը յ ա ն. Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 188:

<sup>3</sup> Տե՛ս Լ. Մ. Մ է լ ի ք ո ս է թ - Բ է կ. Հայերեն-վրացերեն բառարան, Թբիլիսի, 1996, էջ 7:

րեն բառափունջ (սիտղվիսկոնա) կոչեց, ժամանակի ընթացքում անհետացել էր: Քանի որ այս պատվական գիրքը կորել էր, վրացերեն լեզուն (էլ), ըստ իրենց քմահաճույքի, այլանդակել էին. ապա Վախտանգ թագավորի քեռին՝ Գեորգ (Գրիգորի) թագավորը հրամայեց ինձ ձեռնարկել սրան. և ես մի փոքրիկ բառարան տեսա, որը նրանց (հայերեն) լեզվով Բառգիրք է կոչվում, և ես էլ նրանց օրինակով ձեռնարկեցի (սրան) և կազմեցի, որքան էլ ուժս ներում էր...»<sup>4</sup>:

Հեղինակը նույն տեղում ավելացնում է նաև, որ իր ուժերի ներածին չափով, օգտվել է «հելլեն, լաթին, հայերեն (ստմխորի), ռուսերեն և արաբերեն գրքերից» և «քաղվածքներ արել» դրանցից: Նրա մատնանշած և օգտագործած հայերեն սկզբնաղբյուրը, ամենայն հավանականությամբ, եղել է Երեմիա Մեղրեցու «Բառգիրք հայոցը»<sup>5</sup>, որն առաջին անգամ լույս է տեսել 1698 թ., կամ Մխիթար Սեբաստացու «Քերականութեանը» մատենակից բառարանը: Անկախ այն բանից, թե բառարանագիրն իր աշխատանքը գրելիս ձեռքի տակ դրանցից որն է ունեցել, մի բան պարզ է, սակայն, որ նա իր «Լեքսիկոնիում» վրացերեն շատ հասկացությունների ու բառակապակցությունների բացատրությունները տալու համար մեծապես օգտվել է հայերեն բառարաններից ու գրքերից:

Ինչպես տեսնում ենք, Մ.-Մ. Օրբելիանին վրաց իրականության մեջ ուներ բառարանագրության հարուստ փորձ ու հմտություններ, վրաց լեզվի հետ մեկտեղ լավ տիրապետում էր հայերենին, քաջ ծանոթ էր հայ մշակույթին ու բառարանագրությանը, ուստի պատահական չէ, որ վրացերեն-հայերեն առաջին բառարանի ստեղծման նախապատվությունը ևս պատկանում է իրեն: Նրա հեղինակած բառարանը, որ ձեռագիր վիճակում հասել է մեզ, պարունակում է

1.874 բառահոդված: Սրա վրացերեն գլխաբառերի թարգմանված հայերեն եզրերը՝ թարգմանություն-բացատրությունները, ժամանակի հայերեն-վրացերեն ձեռագիր բառարանների նմանությամբ կամ ընդօրինակումով գրված են վրացերեն տառերով, օրինակ՝ სახლო-ბუნ, փոխանակ՝ տուն, წითელი-კარმი, փոխանակ՝ կարմիր, პირო-ბერან (բերան), ცოცხ-ქიხ (քիչ), იამანუშაკ (մանուշակ), თვალ-ახვ (աչք), ზავხუელი-ამარ (ամառ), თოვლი-ძუნ (ձյուն), ძალ-შუნ (շուն) և այլն, բայց դրանք, հնչյունական տարբերությունների հետևանքով, օգտագործողների համար որոշակի դժվարություններ են ստեղծում բառերի իմաստները ճիշտ ընկալելու և հայերեն եզրերն անթերի արտաբերելու առումով:

Մ.-Մ. Օրբելիանու հիշյալ ձեռագիր բառարանի ստեղծումից շուրջ մեկ դար անց՝ նոր ժամանակներում, հայերեն-վրացերեն և վրացերեն-հայերեն բառարաններ ստեղծելու ճանապարհին մի հաջողված փորձ պիտի համարել նաև իշխանագն Դավիթ Մելիքյանի բազմամյա աշխատանքի արդյունքը, որը գրվել է XIX դարի սկզբներին և ներկայումս պահվում է Սանկտ Պետերբուրգի Ռուսական ազգային (նախկին՝ Մ. Ե. Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային) գրադարանի ֆոնդում: Այս ձեռագիր բառարանը եռալեզվյան է, բաղկացած է երեք ստվար հատորներից, որոնք մինչև Գ. Կ. Գասպարյանի «Հայ բառարանագրության պատմություն» մենագրության լույս տեսնելը հայտնի չէին մասնագետներին: Դրա առաջին հատորը ռուսերեն-հայերեն-վրացերեն է, երկրորդը՝ հայերեն-ռուսերեն-վրացերեն և երրորդը՝ վրացերեն-ռուսերեն-հայերեն: Հեղինակն իր աշխատությունն անվանել է «Лексиконъ Россійско-Армяно-Грузинскій, трудами князя Давида Меликова в трех частях», կամ հայերեն՝ «Բառարան Ռուսաց, Հայոց և Վրաց, աշխատանք իշխանագնեայ Դավիթ Մելիքեանի ի երիս հատորս»: Նույնը թարգմանաբար տրված է նաև վրացերեն: Սրա առաջին հատորը պարունակում է 7.500, երկրորդը՝ 8.500, երրորդը՝ 7.000 բառահոդված: Այս բառարանը հայ-վրացական բառարանագրության հուշարձաններից է,

<sup>4</sup> Լ. Մ. Մ է լ ի թ ս ե թ - Բ է կ. Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 121-122: Տե՛ս նաև Նյուեմսթ-Նեմսթ Թրեյլեոսի, Նիցցոսկոն, Թոմսոն, Նիցցոսթ, 1949, էջ 10:

<sup>5</sup> Բառգիրք հայոց, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Երևան, 1975:

որը ցարդ չի ուսումնասիրվել: Նրա հրատարակությունն իր ժամանակին, մատենագետների ու բառարանագետների կարծիքով, կարող էր նպաստել թե՛ հայ և թե՛ վրաց կրթական ու թարգմանական գործի զարգացմանը:

Ահա, հիմնականում սրանք են հայերեն-վրացերեն և վրացերեն-հայերեն այն բառարանները, որոնք ստեղծվել են XVIII-XIX դարերում: Բայց, ցավոք, դրանցից ոչ մեկը չի տպագրվել:

Ռ. Գորգաձեի կազմած սույն «Վրացերեն-հայերեն բառարանը» սրանց շարքում ամենաընդարձակն ու լիակատարն է, որը պարունակում է արդի վրաց լեզվի բառապաշարի մեկ երրորդից ավելին: Հայտնի է, որ ժամանակակից վրացերենում գործածվում է շուրջ 120 հազար բառ, որոնցից հեղինակն իր բառարանում օգտագործել է 40 հազարը և տվել դրանց հայերեն թարգմանություններն ու բացատրությունները: Նա իր սույն բառարանն ստեղծել է ավելի քան 30 տարում և այդ ընթացքում կատարել է գիտաստեղծագործական լուրջ աշխատանք, միաժամանակ ձեռք է բերել բառարանագրության հարուստ փորձ: Նա ուսումնասիրել է հայոց և վրաց լեզուների համար ցարդ ստեղծված գրեթե բոլոր թարգմանական, բացատրական, տեխնիկական-ճյուղային հին ու նոր բառարանները, հրապարակի վրա եղած հայերեն և վրացերեն մասնագիտական տեղեկատուները, յուրացրել դրանց կառուցման սկզբունքները և իր բառարանի համար կուտակել ու համակարգել է չափազանց հարուստ փաստական նյութ, որոնել ու արձանագրել բազմաթիվ բառերի ու բառակապակցությունների իմաստային տարբերակներն ու նրբերանգները, ըստ ամենայնի խմբավորել դրանք ու լիարժեք կերպով ներմուծել իր բառարանը:

Դրան զուգահեռ նա իր մանկավարժական աշխատանքի ընթացքում Վրաստանի հայկական դպրոցների տարբեր դասարանների համար կազմել է վրաց լեզվի դասագրքեր, որոնք հազեցված են վրացերեն-հայերեն և հայերեն-վրացերեն բառացանկերով ու բացատրություններով: Ռ. Գորգաձեն, ինչպես նշել ենք վերը, համահեղինակ էր առաջին «Հայ-վրացերեն գրուցարանը»:

Քի», որը Վ. Պողոսյանի մահից հետո, լրացված ու բարեփոխված տեսքով երկրորդ անգամ լույս է ընծայվել 2004-ին ԵՊՀ հրատարակչությամբ, այս անգամ արդեն միայն իր հեղինակությամբ՝ «Հայերեն-վրացերեն գրուցարան» խորագրով: Այդ հարուստ գրուցարանից ազատորեն կարող են օգտվել ոչ միայն հայ ու վրացի աշակերտներն ու ուսանողները, այլև կարող են շատ բան սովորել բոլոր նրանք, ովքեր գիտեն այդ երկու լեզուների գրերը: Նրանում բացատրություններ կան հիշյալ երկու լեզուների հնչյունական համակարգի նմանությունների ու տարբերությունների, նրբությունների ու տարատեսակ արտասանությունների վերաբերյալ:

Ինչ խոսք, հիշյալ գրուցարանը ստեղծելու փորձն ու հմտությունները, ընդգրկված հարուստ բառամթերքը հեղինակն օգտագործել է նաև իր այս բառարանում, որը կազմել է՝ հաշվի առնելով բառարանագիտության ու բառարանագրության ասպարեզում մինչև այժմ կուտակված գործնական ու տեսական գիտելիքները:

Բառարանը բացվում է հակիրճ առաջաբանով, որին հաջորդում են օգտագործված համառոտագրությունների բացատրություններն ու վրաց այբուբենի հայերեն տառադարձությունը: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ վրացերենը պատկանում է իբերակովկասյան լեզվաընտանիքի քարթվելական ճյուղին: Այն ունի 33 հնչյուն, որոնցից 28-ը բաղաձայն է, իսկ 5-ը՝ ձայնավոր: Այբուբենը ստեղծվել է մեկ հնչյունին՝ մեկ գիր սկզբունքով, մեծատառեր չունի, գրությունը հայերենի պես ձախից աջ է: Հնչյուններից 32-ը, չնչին բացառություններով, նույն արտասանությունն ունեն, ինչպես հայոց լեզվում: Միայն վրացերենն ունի երկու Ղ հնչյուն՝ օ-դան և ց-դար, որոնցից առաջինը՝ օ -ն, իր հնչմամբ նույնն է, ինչպես հայերենի Ղ-ն է, իսկ մյուսը՝ ց-դարը, արտաբերվում է ավելի փափուկ, ինչպես ԿՂ տառակապակցությունը: Վրաց լեզուն չունի միայն հայերենի Ը, Յ, Ռ, Ֆ հնչյունները, Ը գաղտնավանկն ու երկհնչյունները, մնացածը արտասանությամբ համընկնում է: Երկու լեզուների հնչյունական համակարգի այս նմանութ-

յունները նպաստում են բառարանից հեշտությամբ օգտվելու գործին:

Բառարանն ընդգրկում է ժամանակակից վրաց լեզվի ոչ միայն ընդհանուր բնույթի գործածական բառերը, այլև այն իր մեջ ամբարում է վրաց հոգևոր ու նյութական մշակույթի, տնտեսության ու պատմության, ընդհանուր առմամբ՝ հասարակական-քաղաքական ու գիտամշակութային կյանքի գրեթե բոլոր ոլորտներն ընդգրկող բառեր ու բառակապակցություններ: Հեղինակն իր հնարավորությունների սահմաններում ջանացել է մասնագետներին ու ընթերցող լայն շրջաններին ներկայացնել մի ընդգրկուն ու լիակատար բառարան, ուր ներմուծել է նաև հարյուրավոր կայուն բառակապակցություններ, դարձվածքային միավորներ ու թևավոր խոսքեր, առածներ ու ասույթներ, հնաբանություններ ու նորաբանություններ, աստվածաշնչյան պատվիրաններ ու կաղապարային բանաձևումներ: Բառարանում առկա են նաև գեղարվեստական գրականության մեջ հանդիպող ժողովրդախոսակցական, կենցաղային ու բարբառային մեծ թվով բառեր, գիտության ու տեխնիկայի տարբեր ճյուղերին վերաբերող փոխառություններ, մասնագիտական առանձին եզրեր և այլն: Բառարանում արձանագրված է նաև վերջին շրջանի իրողությունների ու հասարակական-քաղաքական ու գիտամշակութային կյանքում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով վրաց և հայոց լեզուներում գործածության մեջ դրված հարյուրավոր նոր բառեր ու բառակապակցություններ:

Բառահոդվածները դասավորված են վրաց այբուբենի հերթականությամբ և տրված են ուղղական հոլովով: Գլխաբառերից անմիջապես հետո առանձնացված են բաղաձայնով վերջացող բառերի ուղղականի վերջավորությունը, որը հիմքից անջատված է գծիկով, օրինակ՝ ճշմարտություն, օրհնություն և այլն: Այնուհետև, գլխաբառերից հետո փակագծերի մեջ է առնված տվյալ բառի սեռական հոլովաձևի վերջավորությունը և նոր միայն տրված է հայերեն թարգմանությունը՝ քերականական նվազագույն նշումներով ու այլ մանրամասնություններով (խոսքիմասային պատկանելությունը, գործածության ոլորտները, ի-

մաստային նրբերանգները, կիրառական հատկանիշները և այլն), անհրաժեշտության դեպքում մեջբերված են նաև հաճախակի գործածվող բառակազմությունները: Տրված են նույնպես հնչյունաբանական, ուղղագրական, ուղղախոսական, բառակազմական, բառապաշարային, ինչպես նաև ոճական յուրահատկությունները, երբեմն էլ այն բառերի բացատրությունները կամ նկարագրությունները, որոնց իմաստային համարժեքները հայերենում չկան, իսկ վրաց ազգային-մշակույթին հատուկ բառերը, դարձվածները ներկայացվում են հայերեն համարժեքներով, իսկ եթե այդպիսի չկան, դրանք բացատրվում են:

Հանրահայտ ճշմարտություն է, որ երկլեզվյան թարգմանական բառարան կազմելը աշխատատար ու ծանր, մեծ եռանդ ու համբերություն պահանջող գործ է: Հեղինակը կարողացել է հաղթահարել ծագած դժվարությունները և հասնել իր նպատակին՝ ստեղծելով ոչ միայն թարգմանական, այլ ինչ-որ չափով նաև տեղեկատվական ու բացատրական բառարան: Նա աշխատել է իր բառարանում ընդգրկել այն ամենը, ինչը պայմանավորված է ժամանակի թելադրանքով և կարող է բավարարել հասարակական պահանջմունքներն ու պատասխանել իրականության հարցադրումներին: Բառարանն աչքի է ընկնում իր գիտակազմությամբ, հակիրճությամբ ու մատչելիությամբ, ունի գործնական ու տեսական նշանակություն: Այն եզրափակվում է հավելվածով, որտեղ ընդգրկված են անձնանունների ու տեղանունների ցանկեր՝ հայերեն տառադարձություններով ու բացատրություններով:

Բառարանի խմբագիրն է Հր. Բայրամյանը, որը կատարել է որոշակի լրացումներ ու հավելումներ, իմաստային ու ոճական ճշգրտումներ ու բարեփոխություններ, հայերեն թարգմանությունները հարստացրել է բազմաթիվ հոմանիշներով ու դարձվածներով:

Մակայն միաժամանակ պետք է նշել, որ բառարանն ունի որոշակի թերություններ: Բնչպես ինքը՝ հեղինակն է նշում իր հակիրճ առաջաբանում, որ սույն հրատարակությունը՝ լինելով առաջին փորձը, չի կարող զերծ լինել թերություններից ու սխալ-

ներից: Նշենք, որ, իրոք, գրքում նկատվում են որոշակի անճշտություններ, վրիպակներ, ինչպես նաև տեխնիկական թերություններ: Մեզ թվում է՝ ճիշտ կլիներ, եթե գրքի կազմի վրա հայերենի հետ զետեղված լիներ վրացերեն «ქართული-სომხური ლექსიკონი» անվանումը, չէ՞ որ այն հասցեագրված է նաև վրացի մտավորականությանը: Ասենք նաև, որ վրացերեն գլխաբառերի համար դուրընթեռնելի տառատեսակ չի ընտրվել, որի հետևանքով նկատելիորեն դժվարացել է բառարանից օգտվելու, անհրաժեշտ բառերը հեշտությամբ գտնելու գործը: Մրան էլ ուզում ենք ավելացնել, որ նման մի մնայուն արժեք ունեցող բառարանի համար 300 օրինակ տպաքանակը չափազանց փոքր է, եթե նկատի ունենանք, որ այն պետք է տարածվի ոչ միայն Հայաստանում, այլև Վրաստանի մի շարք բնակավայրերում, Ջավախքում, Աբխազիայում, Աջարիայում և այլուր, որտեղ բնակվում են հարյուրավոր հայ և վրացի

մտավորականներ, որոնք վաղուց սպասում էին նման մի բառարանի երևան գալուն:

Ավարտելով նշենք նաև, որ Ռ. Գորգաձեի հեղինակած ներկա ծավալուն բառարանը ոչ միայն գիտական-թարգմանական շրջաններում օգտագործելու նպատակ է հետապնդում, այլև մեծապես նպաստելու է վրաց-հայկական և հայ-վրացական փոխհարաբերություններն ավելի ամուր հիմքերի վրա դնելու և խորացնելու, երկու դրկից ժողովուրդների դարավոր բարեկամությունը նորովի ամրապնդելու և թարմացնելու շնորհակալ գործին: Այն դառնալու է մեր երկու ժողովուրդների հասարակական-քաղաքական և գրական-մշակութային բազմադարյան կապերի պատմության մի մնայուն էջը: Լ. Մ. Մելիքսեթ-Բեկի «Հայերեն-վրացերեն բառարանի» հետ մեկտեղ այն գալիս է լրացնելու հայ-վրացական և վրաց-հայկական բառարանագրության ասպարեզում վաղուց նկատված բացը:

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ